— Յետոյ դու կարո՞ղ ես մենակ ետ դառնալ:

— Ես գիշերն էլ չեմ վախենում, երբ սարերի վերա մենակ ման եմ գալիս, — պատասխանեց նա ժպտալով:

— Բայց ինձ այն ասա՛, նրանք ձիո՞վ գնացին:

— Չէ՛, ոտով:

— Ես ինչո՞ւ չեմ գնում ոտով: Մըհէ, ինձ պէտք չէ:

— Ձի՞ն պէտք չէ՛... — կրկնեց վիթխարին, դժդոհութեամբ իմ երեսին նայելով: — Էդ պէտք էր առաջ փիքր անել եւ սատանայի տանջանք չտալ մարդուն...:

— Նա գի՞ժ է, ի՞նչ է, — հարցրի Մարոյից, երբ ծառան հեռացաւ:

— Նա շատ լաւ մարդ է, բայց կը տրաքոի, թէ մի բանի վրայ չխօսայ, երբ նրան դուր չէ գալիս:

Մի նեղ շաւիղ, որ տանում էր դէպի Ծակ-քարը, ոլոր-մոլոր պտոյտներով անցնում էր բլուրների միջով, անդադար դէպի վեր բարձրանալով եւ դէպի վայր իջնելով: Մարօն հագած ունէր մի պարզ, խայտաճամուկ զգեստ, որը կարելի էր տեսնել քուրդ հովուհիների հագին: Նրա սեւ գանգուրները գեղեցիկ կերպով ծածանւում էին բարակ քամուց, որ փչում էր ծովակից: Ամենահամարձակ այծեամն այնպէս թեթեւ, այնպէս յանդուգն չէր կարող թռչել այն քարաժայռերի միջով, որպէս Մարօն: Լեռնային օդը եւ շտապ ճանապարհորդութիւնը ազդեցին մանուկ օրիորդի երեսի վրայ, եւ նրա արեւից այրուած թուխ-թաւիշեայ թշերը ստացան մուգ-վարդագոյն պայծառութիւն:

Ես բոլորովին հիացած էի այն կիսավայրենի լեռնաբնակի սիրուն եւ վայելուչ կազմուածքով, որ այնքան առաձգական էր եւ թեքուն: Ես երբեք երեւակայել չեմ կարող այնպիսի գեղեցիկ աչքեր, մե՛ծ սեւորակ աչքեր, հովանաւորուած խիտ թերթերունքով, այնպիսի գեղագրական յօնքեր, որոնք միանում էին խոտորնակի գծերով: Որքա՜ն ինքնավստահութիւն կար նրա համարձակ շարժուածքների մէջ. որքա՜ն կեանք կար այն բնութեան ազատ եւ հաւատարիմ զաւակի մէջ...: Ես իմ մտքում նրան համեմատում էի գեղեցիկ Սոնայի հետ, որի ամէն մի գծերից արտայայտւում էր ընտանեկան բռնութիւնից ճնշուած եւ տանջուած աղջկայ երկչոտ-ամօթխածութիւնը... Մե՛ծ տարբերութիւն...:

Մի տեղ, ճանապարհի կողքին, կուտակուած էր փոքրիկ բլուր, որ բաղկանում էր քարերի մանր կտորներից. հասնելով այնտեղ, Մարօն առեց գետնից մի քար եւ նետեց նոյն բլուրի վրայ: Ես հարցրի այս խորհրդական գործողութեան պատճառը: Նա պատասխանեց, թէ այս բլուրին ասում են «Սի-